

Համամայ առաջնորդութեամբ՝ ժամանակներ յառաջ այս բարձր լեւանց մէջ՝ բայց ծովահայեաց կողմը հաստատուած եւ գրաւած էր գաւառ մը, որ անոր անուամբ Համամաշէն, աղաւաղմամբ՝ Համշէն կոչուեցաւ եւ մինչեւ հիմայ ալ մնացած է (Զոխ, էջ 23):

Համշէն իրր հայ երկիր տուած է բազմաթիւ նշանաւոր անձեր՝ հայ եկեղեցւոյ եւ հայ ձեռագրաց գրչագիրներու մէջ ալ բաւական թուով են «Համշէնցի», գրողները, ուր ալ գրած ըլլան: Նշանաւոր է ԅովհաննէս Համշէնցի վարդապետը († 1497), որ բազմաթիւ աշակերտներ ունեցած է՝ ուսուցանելով Երզնկայի մօտ Սեպուհ լեւան Աւագ եւ Կայիփոս վանքերու մէջ: Այս աշակերտք, որոնցմէ բազմաթիւ ձեռագիրներ պահուած են, ամենամեծ գովութեամբ կը խօսին անոր վրայ. եւ ոմանք նաեւ Համշէնի իշխանական տնէ կ'ըսեն: Համշէնի մէջ ալ Եղեղի գիւղի քով կար նշանաւոր հայ վանք մը՝ Ս. Խաչիկ անուամբ, որմէ երկրին այն մասը յիշատակարանաց մէջ կը կոչուի «Խաչէքարայ վիճակ»: Հակառակ բռնի մահամետականացման պատճառած կորուստներուն՝ Համշէն գրուած հայ ձեռագիրներու շարք մը կայ, որոնց